

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Երեք տաճար են ասոյ հիացական,  
 Մեծին Յայրութեան և Սուրբ Շնողեան  
 Եւ Սուրբն Յակոր փառատրական.  
 Սուրբ Երուսաղէմ, բաղաքդ աննման:

ՇԱԿՈԲ ԹՈԽՎԹՅԻ (XVII դար)

Մայիսի 12-14-ը Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուրջ ութսուն ուխտավորների հետ Հայրապետական ուխտագնացություն կազմարեց Տերունի Սրբավայրեր:

Մայիսի 12-ին, առավորյան 8.30-ին, ուխտավորների խմբին բերող օդանավը վայրէցը կազմարեց Թել-Ավիվի միջազգային օդանավակայանում: Նորին Սրբության գիշավորած խմբին դիմավորելու էին եկել Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Խորայի Ներքին գործոց նախարարության քրիստոնյա համայնքների պատրավանու Է. Սեղարը, Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններ, Երուսաղեմի հայ համայնքի ներկայացուցիչները: Ուխտավորներն օդանավակայանից ուղևորվեցին Երուսաղեմ: Ինչպես որ դարեր շարունակ հայ ուխտավորի համար Երուսաղեմը սկսվել է Սիոն լեռան գարածքում «ի վերայ զազաթան լերինն Սիոնի» կառուցված Սրբոց Հակոբյանց վանքով, այնպես էլ մեր այս ուխտագնացությունն սկսվեց ուխտավորների իշլանած „David Citadel“ հյուրանոցից՝ 14.00-ին դեպի Սրբոց Հակոբյանց վանք եկեղեցական թափորով ընթանարով:

Ուխտավորների թափորը երկու լայնահոլ խաչմերուկ անցնելով, շուրջով հասավ Հայոց թաղ, որ երբայերեն ու արաբերեն գրություններին ավելանում են հայերենով գրված ցուցանակները, որոնց շուրջով գումարվում են նաև հայկական եռագույն դրոշները, ապա և՝ հայ սկաուֆները, որոնք Սիյուրուում ընդունված պարզու ավանդույթով՝ դեպի Սրբոց Հակոբյանց վանք և Երուսաղեմի հայոց Պատրիարքություն են առաջնորդում Վեհափառ Հայրապետի գլխավորած ուխտավորների խմբին՝ փողոցի սալահարակի երկու կողմերում մինչև վանքի դարպանը խմբված Երուսաղեմի հայ համայնքի անդամների միջով:

Վյսփեղ երևաց, թե դեղի հայությունն ուղղակի և անուղղակի ձևով որքան սերբորեն է կապված Հայաստանի կյանքին: Ուխտավորների մի զգայի մասը քանի որ ճանաչված միավորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ և պետական պաշտոնյաներ էին, ուստի նրանցից շափերին անձնապես կամ էլ մամուլից ու հեռուստագետնունից զիրեին Երուսաղեմի հայերը, որի համար կամ բարեւում էին որպես ծանոթի և կամ էլ մաքնացույց անում որպես հանրաճանաչ մարդու:

Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Երուսաղեմի հայոց Պատրիարքության միաբանները՝ զիշավորությամբ Տ. Թորգոն Պատրիարք Մանուկյանի, որից հետո հոգևոր դասի, ուխտավորների ու Երուսաղեմի հայ հա-

մայնքի անդամների հետ Նորին Սրբությունը «Տրաշափառ»-ով մուսք գործեց փաճար՝ իր խոնարհումը բերելով Գլխադիրի փաղիին, որ ամփոփված է Հակոբոս առաքյալի զրոխը:

Նըմանաց կապարակող եկեղեցական արարողության Նորին Սրբությանը բարիկալսկյան խոսքով դիմեց Երուսաղեմի հայոց Պապրիարք Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

## Տ. ԹՈՐԳՈՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ ՄՐԲՈՅ ԴԱԿՈԲՅԱՑ ՏԱԾԱՐՈՒՄ «ՏՐԱՇԱՓԱՌ»-Ի ԸՆԹԱՅՔՈՒՄ

Վեհափառ Տեր, պատրմության մեջ բացառիկ ուխտավորություն մըն է այս ուխտազնացությունը, որ Վեհափառ Հայրապետը որոշել է զայ միայն երկու օրվա համար իր ուխտը կապարելու և իրեն հետ կրերե խումբ մը, որուն անդամները կներկայացնեն Հայաստանի և Ռուսաստանի պատվիրակություն մը՝ պետական նախարարներ և պաշտոնյաներ, Ազգային ժողովի պատգամագորներ, զիմբականներ և ակադեմիկոսներ, արվեստի և մշակույթի դպրանդավոր մշակներ, ներկայացուցիչներ ընկերային այլ մարզերու և բարեզործներ, հոգևորական ներկայացուցիչներու հետ միասին: Վյապիսի ուխտավորությունն Երուսաղեմի պատրմությունը չէր արձանագրած և այս ուխտը կաղոթենք, որ Աստված ընդունական ընե, որովհետք Վեհափառին ներկայությունը մեզի համար Երուսաղեմի միաբանության և Երուսաղեմի, Խորայիշի, Տորդանանի, Քեթրենեմի մեր հայ հասարակության համար օրինության ներկայություն մըն է: Պատրմությունը երկար է Երուսաղեմի այս փաճարի և սակայն այս պատրմության հոգևոր խորհուրդը այն է, որ հայու հոգին, սրբեծագործ հոգին իր ապացույցը ունի Սուրբ Երկրի հոգերուն վրա: Դայու հոգին իր կամքին ուժը, գոկունությունը արդարացրած է պատրմության ընթացքին և այսօր այսպես ենք և կանգուն ենք շնորհիվ մեր ժողովորի ծառայության, մեր ժողովորի նվիրված սպասավորության, զլուխը կանգնած Ամենայն Հայոց Հայրապետը: Վեհափառ Հայրապետ, Ձեր օրինությունը կհայցենք և կաղոթենք, որ Աստված ընդունական ընե Ձեր այս ուխտը:

Այնուելքն ողջույնի և զնահարանքի խոսք ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

## ՎԵՇԱՓԱՌ ԴԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Ս. ԴԱԿՈԲՅԱՑ ՏԱԾԱՐՈՒՄ «ՏՐԱՇԱՓԱՌ»-Ի ԸՆԹԱՅՔՈՒՄ

(12 մայիսի 2005 թ.)

**Սիրելի Ամենասպագիկ Պատրիարք,**

**Սիրելի բարեկապաշտ հավակացյալներ,**

Ասկուծ ողորմած կամքով Մեր ընկերությունից և օծումից հետո, չորս տարիներ առաջ, ուխտի եկանք աստվածապես Երուսաղեմ: Որպես հարյուրեական ներկուելորդ հաջորդը մեր հավաքոր հայր Ս. Գրիգոր Լուսավորչի՝ եկանք Ս. Էջմիածնի օրինությունը, Տայրապետական Մեր սերը և զորակցությունը բերելու Երուսաղեմի հայոց Պատրիարքին, ուխտյալ միաբանությանը և Երուսաղեմում ապրող Մեր հավատավոր գավակներին:

Տիրոց շնորհով այսօր վերաբին եկել ենք՝ Մեր աղոթքը միահատնելու այս սուրբ հոգից երկինք բարձրացած աղոթքներին, ոժ առնելու և գոհությամբ փառավորելու Փրկչին՝ ասելով. Փառք Քեզ, Տեր Աստված, փառք Քեզ, ամեն ինչի համար փառք Քեզ. Տեր: Փառք Քեզ, որ առաջնորդեցիր մեզ հայրենաքնակ Մեր հավատավոր զավակների հետ ոխտի զալու և խոնարհելու այս նվիրական սրբագրություներին:

Այս զանձեր ունենք աշխարհի բոլոր կողմերում, նաև՝ այս Սուրբ Երկրում, որտեղ ամեն մի քար, ամեն մի շենք, ամենայն ինչ մի ավելարանիչ է, որ մեզ խոսում է մեր Տիրոց և Աստծո մասին: Գանձեր, որոնց խորհուրդը կերպել է մեր ծողովոյի ինքնությունը, որոնք դարձեն շարունակ նորոգել են մեր հավաքքն առ Աստված, հոյսար՝ դեպի զալիքը, և սերը՝ կյանքի հանդեպ: Այդ ոգեղեն զանձերից առած ավյունով մեր ծողովուրդը իր դաշվանած հարուցյալ Փրկչի նման հառնել է Գողգոթաներից և շարունակել իր շինարար ու արենդագործ կյանքը: Այս նվիրական երկրում ևս ի դեմք ձեզ ցուցաբեր դադարում հայ հավատացյալի և հոգնորականի աղոթքը:

Ճեր աչքերի առջև դուք ունեք յերունական երանելի սուրբ վայրերը և ձեր սրբում՝ երանցից բխող օրինությունն ու միմիթարությունը բայց և ձեր հոգում, ձեր հայ սրբում կրում եք խորհուրդը Քրիստոսակերպ Սուրբ Հջմիածնի՝ համայն հայության և լիլիրական սուրբ կենտրոնի: Սիրելիներ, մեր ճայրենիքի ու Սուրբ Հջմիածնի սերն ենք բերել Ձեզ:

Զաջարելոյակ ենք, թե ինչպիսի քաջությամբ ու գողունությամբ դիմագրավեցիք փորձություններին, և զուց աղոթքը և լիլիրական այս սուրբ բաճարի կամարների ներք: Այս զգացումներով և այս խոհերով վերաբին ողջունում ենք Ձեզ, սիրելի Ամենապատիկ Պատրիհայք, զիւվորյալ միաբանություն ու բարեպաշտ հավատացյաներ: Աղոթքում ենք առ Բարին Աստված, որ կենաց արևշապ օրեր պարզեցի Տիրդ Ամենապատվորյանը, և հայցում Տիրոց զորակցությունն ու օրինությունը՝ ձեր ջանքերում միշտ հաջողություններ տեսնելու՝ ի պայծառություն Երոսադեմի հայոց Պատրիհարքության և այս Սուրբ Երկրում ապրող հավատավոր Մեր զավակների:

Սրբոց Ճակոբյանց Մայր Տաճարի կանթեղներով զարդարուն Ազագ խորանի լուսանկարը ամենափարբեր երարարակություններում կարելի է գտնեն, այդ թվում և՝ Երուսաղեմի հայոց Պատրիհարքության «Սիոն» ամսագրի շապիկին, սակայն եկեղեցու դռներից ներս մինելով՝ ունենում ես թե՛ խոսքերով դժվար արտահայտելի և թե՛ լուսանկարներով անփոխանցելի հոգևոր բարձր, բայց և անսովոր մի զգացում, որը պայմանավորված է թե՛ եկեղեցու ներքին ծավալներով, գեղարվեստական հարդարանքով և թե՛ եկեղեցական շրեղ սպասքով, որում առանձնանում են հավկացներ լուսավորող կանթեղները:

Ճայոց գանքը և Մայր Տաճարը Սրբոց Ճակոբյանց՝ Սուրբ Ճակոբների են կոչվում, որովհետք, համաձայն եկեղեցական ավանդության, եկեղեցու ներսում է ամփոփված 44 թ. Ներովին Ազրիապի հրամանով գլխարված Ճակոբոս առաքյալի գլուխը, ինչպես նաև՝ Երու-

սաղմանի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնելոր մարմինը, որով եկեղեցին և վանքը դառնում են Սուրբ Հակոբների՝ Սրբոց Հակոբյան:

Հանքի ընդհանուր հօրինվածքը, Գլխադիրի այն գրեղը, որ ամփոփված է առաջյայի գլուխ, և կից մաքուրների հնագիտական պեղումները վկայում են, որ քրիստոնեության առաջին դարի այս սրբավայրի հնագոյն երկու հարգածները՝ Ս. Գլխադիրի և Ս. Մինասի մագուրները, կառուցվել են չորրորդ դարում՝ այնուելքն ներառվելով 9-12-րդ դարերում կառուցված վանական համալիրում:

Այս բազմաշերտությունը արքացոլվում է և վանքի ողջ կառուցվածքում ու գրանցածքում: Բերդապարհսպաններ հիշեցնող պարիսպներով վանքի ներսում եկեղեցիներից ու մաքուրներից բացի գրնվում են նաև ժամանակին այսրեղ հոծ խմբերով ուխտի եկող հայերի համար կառուցված կացարանները, ինչպես նաև՝ բնակելի մի շարք շինություններ, որոնք միաբանությունը գրեղի հայությանն է բվել քանակության համար: Այսպես ապրողներն իրենց կյանքն իսկ հարմարեցրել են վանական կյանքի ընթացքին. քանի որ վանքի դուռը փակվում է երեկոյան ժամը 10-ին, ուստի բնակիչները մինչ այդ պերք է վանք գտն, այլտպես դրսում կմնան, որովհետո իրենց դիմումը գրանող այլ ճամապարհ չկա:

Ինչպիսի երես որևէ հրամայական անհրաժեշտություն այսրեղ ապրողներից որևէ մնալին պարփակում է ուշանալ, ապա նա զանգահարում է վանք, նախապես զգուշացնում, և վանքի դուռը իր զայռ ժամանակ բացում են:

Վանքի գրանցածքում են գրնվում նաև Պատրիարքարանի ու գրեղի հայ համայնքի ուսումնական հասպարությունները՝ Սրբոց Ձ-արզմանչաց երկրորդական վարժարանն ու ընծայարանը և նախակրթարանը (մանկապարփեզը): Այսրեղ են և Պատրիարքարանի թանգարանն ու Մարտնադարանը (զրադարանը), որոնցում այժմ նորոգության աշխարհանքներ են ընթանում, ինչպես նաև՝ Զեռազրաբունը:


Հայոց Պատրիարքարանի շրեն և ավանդաշունչ ընդարձակ դահլիճում պատերի կրավագներից նայում են Երուսաղեմի երանաշնորհ պատրիարքների հայացքները: Այն պատրիարքների, որոնց ջանքերով սերնդներուն փոխանցվեց և որպես ավանդ մնաց հասավ Երուսաղեմի գրեռունական սրբավայրերի պահպանության հայոց բաժինը՝ որպես Հայ Երուսաղեմ և Սուրբ Երկրի հայկական սպասավորություն և առաքելություն (միսիա): Սուրբ Հարության դրամարից մինչև Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան եկեղեցին:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո, Պատրիարքարանի այս դահլիճում կազմակերպված ընդունելության ժամանակ, ուխտավորների խմբին բարիգալսպյան խոսքով ղիմեց Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Ձ-որգում արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հայոց Մեծ եղեռնից հետո վերացավ արևմտահայության խմբային ուխտավանացությունը Երուսաղեմ, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո դադարեց նաև արևմտահայության ուխտագնացությունը: Հայաւրանի անկախացումից հետո, 1990-ական թթ., եղան Երուսաղեմ ուխտագնացություն կազմակերպելու մի քանի փորձեր, որոնք, սակայն, հաջողություն չունեցան, և զրեթե մեկդարյա ընդմիջումից հետո սա ոչ թե Սփյուռքից, այլ հենց Հայաստանից եկած ուխտավորների առաջին խումբն էր: Այս իրողությունը առանձնակիրքն շեշտեցին ու կարևորեցին թե՛ Երուսաղեմի հայոց Պատրիարքը և թե՛ միաբանության ու գրեղի հայ համայնքի անդամները այս և մի շարք այլ հանդիպումների և հավաքների ժա-



ԵՐՈՒՍԱԼԵՄ ՀԱՅՈՒԹ ԵՐՈՒՍԱԼԵՄ ՀԱՅՈՒԹ ՊԱՏՐՈՒՄ ԳԼԻՎՈՐՈՒԹՅԱՄ  
ՍՐԲՈՅ ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՆԻ ՍՈՒՏՔԻ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ





«ՀՐԱՇՎԱՓԱՌ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՎՐՈՒՄ

մասնակ՝ մաղթելով, որ Վեհափառ Հայրապետի ջանքերով նման շատ խմբեր գան Ս. Երուսաղեմ, և հայ ուխտավորության դարավոր ընթացքը վերսպին շարունակվի նաև Հայապանից կարարվող ուխտազնացություններով:

Այսուհետիւն Նորին Սրբությունը մենք անձամ և բարձրորեն զնահապեց Երուսաղեմի հայոց Պատրիարքության նախանձախնդրությունը Ս. Երկրի հայկական տնօրինությանը հանձնված սրբագրելիներին բերած սպասավորության համար՝ ի մասնավորի ասելով. «Ես կրկին անգամ իմ զնահապանքը և օրինանքն եմ բերում ողջ միարանությանը և իմ բարեմադրանքը Զեզ, սիրելի Պատրիարք, որ Աստված պարզելի Զեզ երկար առողջ կանք այս ժառանգությունը պահպանելու և մեր հաջորդ սերունդներին ավանդ թողնելու: Աստված Զեզ զորացնի, Աստված Իր Աջը, Իր զորավոր Աջը մարդկակից դարձնի Զեզ և ողջ միարանությանը Երուսաղեմի հայոց Պատրիարքության»:

Բացի բուն թանգարանից, վանրում մի շարք շինություններ և ունեն իրենց թանգարանային-պատրմական մասը, որոնք ցույց են տրամադրության մասին: Թե ինչպիսին է եղել Սրբոց Հակոբյանց վանքի ներքին ներքին ներքին պատրմական մասը, որը պատրաստված է առաջնային շրջանում, երբ վանքն ուներ ուխտավորների համար հաց պատրաստող փուռ, ալրաղաց, ուխտավորների գրասպների փեղ և համանման այլ շինություններ: Բնականարար, այս ամենը հիմա վերափոխվել և այլ զործառույթ ունեն վանքի գարածքում, սակայն նրանցից յուրաքանչյուրից պահպանված մի-մի անկյունը ուխտավորների աջքերի առջև գծագրում է Սրբոց Հակոբյանց վանքով և Մայր Տաճարով սկսվող Հայ Երուսաղեմի ավանդական հին պատրիարքը:

Ցուցադրությունների այս շարքում բոլորին կամ բնականարար, ամենից շատր հետաքրքրում էր Սրբոց Հակոբյանց վանքի Զեռազրապան և ծեռազրերի պահպանության վիճակը: Մատուցից մարդու և շինությունից շինություն անցնելով՝ վանքի գարածքում իրար վրա բարձրացող հարկաբաժններով, որոնք վանական ավանդություն այսուհետ «թաղ» և ասվում է ինչպես, օրինակ՝ Ուխտավորաց թաղ, Սարկավազաց թաղ և այսպիս շարունակ, վանակապատ մի քանի դռներ անցնելով, սանդուղքներով վեր ենելով ու վայր իջնելով՝ հասնում ենք Զեռազրապան, որը վանական համալիրին մաս կազմող Ս. Թեոդորոս եկեղեցին է՝ կառուցված 13-րդ դարում Բ թագավորի կողմէց: Որպես եկեղեցական շինություն՝ Զեռազրապան համար այն առավելությունն ունի, որ կառուցված է հասրահեղույս քարերով, որոնք, բնականարար, կայուն ջերմաստիճան և ապահովում թե՛ ձմռանը և թե՛ ամռանը, ինչպես նաև ջերմամեկուսիչ են, ինչը առանձնակիրքն է՝ կարևորվում Արևելիք շոգ և գործ պայմաններում:

Երուսաղեմի հայոց Պատրիարքության Զեռազրապանը իր 4000 ձեռագրերով հայկական ծեռազրերի երկրորդ խոշոր պահոցն է՝ Մաշտոցյան Մագիստրատունից հետո: Ձենք արդեն ութ քարի է անցել այս Զեռազրապան՝ դասնամյակների պատրասխանագույն Նորայր արքեպիսկոպոս Պողարյանի վախճանումից, սակայն ծեռազրապանը դեռևս թնածում է նրա շունչը:

Մինչ Զեռազրապանը դիտում էինք պահպաններում ապակու գալիքից երևացող կաշեպատ և կամ էլ մերայլա կազմներով ծեռազրերի թիկունքները, Զեռազրապան աշխարհակցուիկ Արքինենիկ Գահիկեցյանը բերեց Ռուսինի ծաղկազարդած Ավելարաններից մեկը: Բա-

ցելով այն՝ սկսեց ցույց դրա և զգուշությամբ թերթել ձեռագրերի էջերը, և Ձեռագրագրան սկսեց թևածել հայոց միջնադարի մեծ վարպետի շունչը:

Երուսաղեմի Ձեռագրագրունը ուներ Ռուսինի ծաղկած վեց ձեռագրեր, որոնցից մեկը ժամանակին Եղիշե Պատրիարք Տերփերյանը նվիրեց Վազգեն Վեհափառին, իսկ Վազգեն Վեհափառն է՝ Մաշփողյան Մարենադարանին: Մյուս հինգ ձեռագրերը շարունակում են պահպել այսպես:

Ուխտագործների մեր խմբով այնուհետք եղանք Սիրոն լեռան բարձունքում հայոց Պատրիարքության ընդհանուր շրջագծում գտնվող Ս. Փրկիչ և Ս. Հրեշտակապետաց հայոց վանքերում: Համաձայն ավանդության, Ս. Փրկիչ վանքը կառուցվել է Կոյխափսի քահանայապետի դրան, իսկ Ս. Հրեշտակապետացը՝ Անսա քահանայապետի դրան գավթի դեղում, որ Հիսուսին հարցաքննելու ժամանակ ծառաներից մեկը ապդակում է Նրան: Ռովիան Ուկերերանը գրում է, որ հրեշտակները, սարսափած այս համեղությունից, թևերով ծածկում են իրենց երեսները, և քանի որ եկեղեցին կառուցված է այդ դեղում, ուստի կոչվում է Արքոց Հրեշտակապետաց:

Երուսաղեմուն Սուրբքրային պարմությունը և այդ պարմության հետ կապված հիշարքակներն առարկայանում են և փոխանցվում սերնեսերունդ: Հայոց պահանանությանը հանձնված այս վանքում նման քարացած մի հիշարք է Ուխտաննայի քարը:



Հիսուս Ծաղկազարդին երբ Երուսաղեմ է մքնառ, ժողովուրդը ասում է. «Ուխտաննա»: Այդ ժամանակ փարիսեցիները Հիսուսին ասում են, թե սաստիք Զո աշակերտներին, որ Քեզ նման փառաբանական խոսքեր չասեն: Հիսուս, սակայն, նրանց պարտախանում է, որ եթե մարդիկ է լրեն, ապա «քարերը կաղաղակեն» (Ղուկ. Ժթ-41):

Եվ ահա, այս վանքի եկեղեցու որմերից մեկի անկյունային շարվածքում զարմանալի մի քար կա՝ մարդկային բերան հիշեցնող նման քացվածքով, որի համար ասվում է, թե այն մեկն էր այն քարերից, որոնք Հիսուսի այս խոսքերից հետո «Ուխտաննա» ասացին: Երուսաղեմի սրբազն մթնոլորտում թվում է, թե այս քարի՝ բերան հիշեցնող գոգածն կպրվածքին քարացել և մնացել են «Ուխտաննա»-ի հնչյունները:

Ուխտագնացության մեր առաջին այս օրն ավարտվեց Սիրոն լեռան Վեհանարան և Տիրամոր Նեղման փեղերում կառուցված սրբավայրերը գնալով, որոնք, լինելով նոր շրջանի եւլուպական եկեղեցիներ, իրենցում կրում են անցյալի սրբազն շունչը:

Տաջորդ օրը, մայիսի 13-ը, սկսվեց Զիթենյաց լեռան սրբավայրեր այցելությամբ: Այս դեպքու նախ եղանք «Հայր մեր»-ի եկեղեցում, որը ևս մի օրինակ է, թե ավելարանական պարմությունը և բողերը ինչպես են առարկայանում և փեղյանանում Երուսաղեմում և ընդհանուրապես Սուրբ Երկրում: Համաձայն ավանդության, Հիսուս այսպես է ուսուցանել «Հայր մեր»: Լավիներեն այս վանքը անվանվում է «Peter Noster» և կառուցվել է 19-րդ դարում: Եկեղեցու դարածքում բազմաթիվ լեզուներով «Հայր մեր» է գրված, որոնց շարքում հայերենը երրորդն է՝ լավիներենից և արաբերենից հետո: Այսպես մեր խումբը Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ երգեց «Տերունական աղոյթքը»՝ «Հայր մերի» գրաբար հնչյունները միախանակու այս աղոյթքի շրջակա բազմաթեզու գրեթին:

Այսպեսից գնացինք Ս. Համբարձման սրբավայր, որը կառուցվել է այն վայրում, որտեղից երկինք համբարձման Հիսուս: Քրիստոնեական ամենազիստավոր և նվիրական սրբա-



«ՀԱՅՐ ՄԵՐ»-Ի ԵԿԵՂԵՑՈՒՄ



ԳԵՂԱԵՄԱՆԻ ՏԻՐԱՄՈՒ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

վայրերից մեկը եղող այս տեղը նախորդող դարերում պատկանել է հայերին, ապա և երկար ժամանակ վեճերի առարկա դաշտնալով քրիստոնեական Եկեղեցիների միջն, որպես հերթական մի փխոր արդյունք նման վեճերի, վերցվել է քրիստոնյաներից, և Եկեղեցին մզկիթի է վերածվել: Մզկիթ դարձված այս Եկեղեցու ներսում շրջանակի մեջ վերցված պահպան է մի մարմարյա սալաքար, որի վրա պարզորոշ որվագծվում են երկու ուրնահետքերի փեղեր: Ասվում է, որ այսփեղից Հիսուս Երկինք համբարձվեց, և սա երկիր վրա Հիսուսի ուրնահետքերը կրող վերջին կեպն է, և որի վրա է Եկեղեցին է կառուցվել: Եկեղեցու բակում, այն պարող շրջակա պարսպից ներս կանգնեցված Ս. Ստեղանին, ամեն փարի Համբարձման տրոնին Ս. Պատրարքաց են մարդուում Երուսաղեմի հայոց Պատրիարքության միաբանները:

Մեր ուխտագնացության հաջորդ կայանը Գերսեմանիի Ս. Ասրվածածին Վերափոխման Եկեղեցին էր: Գրեթե ամբողջությամբ հողի մեջ թաղված այս Եկեղեցին մեկն է Երուսաղեմի ամենաինքնապիշտ շինուարյուններից: Եկեղեցու վերին մասը վաղոց բանդվել է, սյուների խարիսխմերը ծածկված են երկուսից երեք մետր հասպուրյամբ հողի շերպով, այդ իսկ պարբառով ներս ես մգնում իշնելով 45 լայնանիստ աստիճաններով: Եկեղեցու կենտրոնից դեպի արևելք գտնվում է Ս. Կոյսի գերեզմանը՝ առնված առանձին մի փոքրիկ մասրություն մեջ, որ ամեն առավոր հաջորդաբար Ս. Պատրարքաց են մարդուում հույները և հայերը: Շարաթվա ընթացքում երկու անգամ պատրարազում են նաև դպրի հոգևորականները՝ արքահայտելով իրենց հարգանքը Հայոց Հայրապետական Վթոոի գահակալին:

Տիրամոր ծնողների մասին թեև Ավելիարաններում ոչինչ զրված չէ, սակայն, համաձայն Եկեղեցական ավանդության, Ամենասրբութի կույսի ծնողներն են նոր Տովակիմը և Աննան, որոնց շիրմիները ևս գտնվում են այս Եկեղեցում: Այսինքն՝ այսպես է նոր նրանց գոհմական գերեզմաննոցը, որ և ամփոփվել է նաև Տիրամայրը՝ Երկինք վերափոխվելուց առաջ:

Այս Եկեղեցուն կից գտնվում է Գերսեմանիի պարպեզը, որի ծիրենիների ներքո աղոթեց Հիսուս Նորից խնդրելով իրենից հետացնել դատնության բաժակը: Այսօր ևս այս պարպեզում իրենց հովանին են փարածում հասպարուն դարավոր ծիրենիները:

Հայոց Պատրիարքարանը Գերսեմանիի պարպեզին կից կառուցվել է Ս. Ասրվածածին Եկեղեցու ընդունելության սրահը, որի հանդիսավոր բացումը կատարվեց Գարեզին և Վեհափառ Հայրապետի կողմից մեր ուխտագնացության շրջանակում: Նորին Սրբությունը, բարձր գնահատելով Երուսաղեմի հայոց Պատրիարքության և ի մասնավորի՝ այս Եկեղեցու հայ հոգևորականների ջանքերը և նախանձախնդրությունը, մաղթեց, որ նորաբաց այս սրահը դառնա Հայ Երուսաղեմի հոգևոր ու ազգային ևս մի կարևոր կենտրոնագեղի՝ այսպես կազմակերպվելիք միջոցառումներով և հանդիսավորություններով:

Երուսաղեմը կառուցված է բլուրների վրա, որոնց մի մասը նաև «լեռ» է անվանվում: Լեռները ավանդաբար համարվել են Ասդոն և մարդու հանդիպավայրը: Ասրված Սինա լեռնա վրա Մովսեսին փվեց Տասնարանյան, Հիսուս թաքոր լեռան վրա պայծառակերպվեց՝

աշակերպներից երեքին հայրնելով իր ասրբածությունը, և համբարձվեց դարձյալ լուսն զագարից:

Երուսաղեմի շաբ բլուրներ սակայն բլուրներ են ոչ թե իրենց բարձրությամբ, այլ իրենց հոգևոր խորհրդի վրա խարսխված պատմությամբ: Եթե չափի, որ սա Զիրենյաց լուսն զագարն է, ապա դժվար է պարկերացնել, որ դու գրիվում ես առանձնակիրեն բարձրադիր մի վայրում, սակայն Համբարձման խորհուրդը անսահմանորեն բարձրացնում է իրապես Երուսաղեմի ամենաբարձր կերպ եղող այս զագարը, և քեզ թվում է, թե զրիվում ես երկնիք ու երկրի միջև: Եվ դարձյալ պարմությունն է, որ իր սրբազն խորհրդով առանձնակի մի խորություն է հաղորդում Գերսեմանիի և Երուսաղեմի մյուս ճորերին:

Գերսեմանիի պարտեզից սկսվեց չարչարանաց ճանապարհը, և անա խորհրդանշական կերպով այս պարտեզից զնում ենք Հոլոքոսթ՝ հրեական ողջակիզման Յադ Վաշեմ (Yad Vashem) թանգարան: Խնչվես որ մինչև Հայոց Մեծ եղեռնի զրիերի հուշարձանին հասնելը երկար մի ճանապարհ պետք է անցնել, որը խորհրդանշում է զաղիք և փարագրության ճանապարհը, որով անցան մեր նահարակները, այնպես էլ Հոլոքոսթի թանգարանը, որը գրինվում է Երուսաղեմի բարձրադիր վայրերից մեկում, անցնում ես պարրասպակած մի կամրջով և այն զգացրությունն ես ունեմում, որ աշխարհից զնում ես դեպի համակենբրոնացման ճամբար: Այս թանգարանի յուրահավելությունն այն է, որ բուն ցուցանուշների և հրեաների փառապանքն ու ողջակիզմը ներկայացնող պատմական լուսանկարների պարզենների փոխարեն, այսրեղ փոքրիկ պասպառների վրա շարունակարար ցուցադրվում են վավերագրական ֆիլմեր, որոնցից յուրաքանչյուրը ավարտից հետո նորից է ցուցադրվում:

Քանի որ ուխտավորների մեր խումբը դեկավարում էր Վեհափառ Հայրապետը, ուստի թանգարանի մուտքին մեզ դիմավորելու եկավ և ողջ ցուցադրությունը սրան առ սրան առաջնորդելով անձամբ բացաբերեց թանգարանի դիմորեն Ավելեր Շալեր, շնորհիվ որի հնարավորությունը ունեցանք առավել ուշադիր դիմելու շարունակ լեցուն այս թանգարանը:

Առաջին սրահում ցուցադրվում էին վավերագրական կադրեր, որոնք ցույց էին փալիս հրեաների բարվոր վիճակը Եվրոպայում և մասնավորապես Գերմանիայում 1930-ական թթ. սկզբին: Համակարգչային վարպետ մոնիթորով վավերագրական այս կադրերին միահյուսվում էին նաև դարձրելու լուսանկարներ, և մեծ լուսապատճենի մի անկյունից մյուսը, երաժշգույթյան մեջ հնչյունների ներքո, դանաշաղ սահելով ընթանում և ծածկվում են հրեաների ժապուն դեմքերը՝ դիմոդին փոխանցելով այն մրածումը, թե դեսնես ի՞նչ եղավ այս մարդկանց հետքազ ճակարպագիրը:

Դաշորդ սրահի կադրերն էլ ցույց են փալիս, թե ինչպես հանրահավաքների ամբիոններից և լեցուն մարզադաշտերի դրիբունաներից հնչող ելույթներով, երկինք ներփառ սպասիկաներով և այն պարկերող պարզված դրոշներով Գերմանիայի ու Եվրոպայի վրա դանդաղորեն իշնում է Փաշիզմի ծանր ու սև վարագույրը:

Մյուս սրահներում պարկերված էին հրեական շորջկալները, ապա և՝ համակենբրոնացման ճամբարները: Այս թանգարանի յուրահավելությունն այն է, որ այսրեղ բուն ողբերգության դեսարաններից առավել վեր է հանվում դրանց գործադրման մեխանիզմը համակենբրոնացման ճամբարներում: Նոյն այս նպարակին են ծառայում համակենբրո-

նացման ճամբարների մանրակերպները և հրեաներին ի մի հավաքելոց մինչև վառարաններում այրելու բոլոր փուլերը ներկայացնող դրվագները՝ ճամբարների համապարապախան այդ բաժինների և մեխանիզմների փորձիկ մանրակերպներով:

Ամենացնցողը, սակայն, թանգարանի վերջին սրահն է, որը վերևում երկնային անհոնի պարագաներն են: Արենդպում, իսկ ներքեւում զնայով անթափանց դաշտող սև անդունդն է: Այս դահլիճը խորհրդանշում է մարդկային հիշողությունը, և երկնքի անհոնի ու խավարային անդնդի մեջփեղում երկրային հափածում, բոլորան այս դահլիճի պատերի երկայնքով դրված պահարաններում շարված են զոհ զնացած հրեաների կենսագրությունները պարունակող հափորները: Այսքեւ գդնվում է նաև մի համակարգիչ, որի հիշողության մեջ, ըստ այրբենական շարքի, նշված են բոլոր զոհերի անունները, և յուրաքանչյուր գդնված նոր անուն թէ՛ զրանցվում է այդ համակարգում և թէ՛ համալրում այս հափորաշարի վերջին հափորը և կամ է իրենով բացում մի նոր հափոր:

Ցուցադրությունը դիպելոց հետո հայ ուխտավորների կողմից Ողջակիզման գոհենի հուշարարին զեկույզեցին երկու ծաղկեապսակներ՝ մեկը Հայոց Հայրապետության և մյուսը Հայաստանի Հանրապետության կողմից:

• Այսուհետք ի պարիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն էին կազմակերպել ասքանազյանների Խորայելի խախամապեր Ռարքի Եռնա Մեցկերը և Ռարքի Դեյվիդ Ռոզեն: Ընդունելությանը ներկա էր նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Շորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը, ինչպես և մասնակցում էին Խորայելի խորհրդարանի (Կնեսեթի) պարզամափորներ Ռունֆմանը և Յուրի Շփերնը:

Ուխտագնացության հաջորդ կետը Բեթղեհեմի Ս. Շննդյան տաճարն էր: Բեթղեհեմ քաղաքի մուտքին Վեհափառ Հայրապետի զիսավորած խումբը ընդունվեց զինվորական պարիվներով և առաջնորդվեց մինչև Ս. Շննդյան տաճար, որի մուտքին Նորին Սրբությանը և ուխտավորներին ողջունեց գեղի հոգևոր տեսուչ Ռազմիկ վարդապետ Պողոսյանը:

Պարզու այս ընդունելությանը մասնակցում էին Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի ներկայացուցիչ Դոկտ. Էմիլ Ճաճուին, Բեթղեհեմի պետքական զրասենյակի պետ Շաքի Աբու Շամգիին և Պաղեստինյան ինքնավարության բարձրասպի-ճան այլ ներկայացուցիչներ:

Երբ միանք Բեթղեհեմի Սուրբ Շննդյան տաճար, այսպես Ս. Պատրարքաց էին մարդուցում հոյւները: Մի քանի բոլոր հեփենելով ընթացող Պատրարագին՝ այսուհետք նկանեցու հայկական թևով իջանք բռն այրը, որը մոգերին առաջնորդած Բեթղեհեմյան ասպրդը խորհրդանշող դասնշորս թևանի ասպրն է, որի կենաքրոնում շրջանաձև մի ապակի է, և նրա միջից երևում է այն գեղը, որը ծնվեց Շիուս, իսկ այդ գեղին կից գդնվում է: և այն մսուրը, որը Փրկիչը դրվեց ծնվելուց հետո: Դիմելով 4-րդ դարից սկսալ բազմաշերտ հորինվածք ունեցող այս տաճարը, ուխտավորները այսուհետք հյուրընկալվեցին տաճարի հայկական մասի հյուրասրահում:

Թե՛ եկեղեցի միքնելիս և թէ՛ ենելիս մեզ հյուրընկալորեն ողջունեցին Բեթղեհեմի արարները: Նայելով արևակեզ, հանդարտ ու Աքնելիք մնայուն բարոյականության դրոշմը իրենց դեմքերին կրող այս մարդկանց, որոնք այսպես սիրով ու հարգանքով ողջունում էին, ակամա ցանկանում էիր և նրանց երախտագիտություն հայդուկ, որ իրենց պապերը 1915 թ.

ապասրան փվեցին անապապներում դպնդաղ և բանջալից մահվան դարձարգված հայության քարավաններին:

Քերդնեմից ուխտավորները ուղևորվեցին Մելյալ ծով, ապա եր վերադառնալով՝ փեսան Փորձության լեռ, որ Վիտոս փորձվեց սարանայից, այսուհետև եղան Երիքովում, որի ավերված բարձրահայաց պարիսպները այսօր ևս հնարավոր չեն դիմել առանց հիացմունքի:

Երեկոյան ընդունելություն եր կազմակերպվել Ժառանգավորաց վարժարանում, որ Նորին Սրբությանը և դիմութափորների խմբին բարի երթի խոսքով դիմեց Ժառանգավորաց վարժարանի դրսուչ Տ. Պարեկ վարդապետը:

Այսուհետք ելույթ ունեցան Ժառանգավորաց վարժարանի տաները, որոնց մի մասը այս դեղու ուսանելու է եկել Հայաստանից, իսկ վարժարանի գեղարվեստական դեկալարն է հայաստանյան արվեստագեղիներից Մելրակ Երկանյանը:

Հանդիսության ընթացքում Երուսաղեմի հայ համայնքի անդամներից յոթին հանդիսավոր պայմաններում հանձնվեցին Հայաստանի Հանրապետության անձնագրեր:

Այսուհետք ելույթ ունեցան ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ Գիրությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, բանասրեկիծ Արամայիս Սահակյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Արքահամբյանը, Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր Ռատիկ Մարգիրոսյանը: Բանախոսները, ներկայացնելով իրենց սրբացած անկրկնելի դպավորությունները, միաժամանակ անդրադառն Հայրենիք-Սկիզբան հարաբերություններին և ի մասնավորի հայրենի գիրության և մշակույթի առկա ներուժը նաև Հայ Երուսաղեմին ծառայեցնելու հարցին, մարդանշելով համագործակցության և համարելու գործունեության մի շարք կարևոր բնագավառներ:

Ապա հավաքածներին դիմեց Թորգոմ Պապրիարքը, որից հետո երեկոն եզրափակվեց Վեհափառ Հայրապետի խոսքով:

## ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸԸ ՎԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կարելիություններով լեցուն հայրենիք մըն է, որ ունինք և այս իրողությունը մեզի կխանդավառն, կքաջալեն և ան մեծ երաշխիք մըն է նաև հայ Երուսաղեմի կյանքին և Պապրիարքության գործունեության և կարելիություններուն:

Կարելիությունները բազմաթիվ են, մինչև անզամ Սորբ Տեղյաց և մեր Պապրիարքության սահմաններուն մեջ: Ես սովոր եմ օպարներուն ներկայացնել մեզ, ըսելով՝ մենք ունինք պարզավորություններ, դաստիարակչական առաքելություն, որուն համար ունինք մեր Թարգմանչաց վարժարանը և Ժառանգավորաց վարժարանը: Մենք ունինք մեր միջոցները, ինչպես և կարելիությունները մեր հոգևոր-մշակութային հարստությունները ներկայացնելու մեր համեստ թանգարանով, մաքենայարանով, մեր ծեռագիրները Ս. Թորոս մարտոնին մեջ ամփոփված Զետագրադրունով, մեր դպավարանով, որ 1833 թ. հիմնված է հայուն ծեռովք Երուսաղեմի մեջ և կգործն մինչև այսօր :

Ունինք մեր ժողովուրդը, որ թիվով ներկայիս նվազած և սակայն հոգիով նոյն երաշխիքը կուպա, որ ինքը զավակն է են ժողովուրդին, իր ժողովրդի մշակույթին, ալաբուրժան: Մենք ունինք մեր եկեղեցիները, ինչպես արդեն տեսաք՝ Ս. Հակոբը, Ս. Դրեշփակապետացը, Ս. Փրկիչը և Ս. Թորոսի մաքուրը և վերջապես ունինք մեր նյութական միջոցները ապահովող մեր կալվածքները: Ձեւ որքան այս բոլոր կարևորությունները մենք կարող ենք իրենց լիառափ արդյունքով ապահովել՝ մեզի համար մրահոգություն է այսօր: Կուգեմ այնպես զսրած լինել, որ ինչպես որ մեր հայրենի երկրի ներկայացուցիչները ապահովել են, որ մեր հայրենիքը հասպարուն է, հասքարաքայլ է, այնպես է կաղորեմ, որ Սուրբ Երուսաղեմի մեր Պապրիաբության բոլոր այս կարելիությունները չձարին, չնվազին, չնվազին և այս հույսով է, որ ես կնայիմ մեր ուխտավորություններուն:

Ուխտավորները անապայման պեսք է որ Երուսաղեմ գան, պեսք է հայ անունը, հայու ուխտավորությունը անպակաս լինի, ինչպես քոյլը Եկեղեցիները իրենց բազմամիջին ժողովուրդներով կապարեն այն: Եվ այս նմանությունը մեր հայրենի երկրին ներկայացուցիչներուն կարելիություններուն և զգքիկ օրինակը, որ տեսաք, մեր ժառանգավորաց վարժարանի, որ կուսանին Հայաստանն եկած սաներ, այդ երաշխիքն է, որ մեր ժողովուրդը սպահով կզգան և այս գիշեր պիտի հուսադրված այս սրահն գրուն երթան և Զեր ներկայությունը շնորհ է, բարիք է, երաշխիք է: Վյո հույսով կավարտենք և Զեր օրինությունը կիսնենք: Վյո հույսով Վեհափառ Հայրապետի մաղթանքը մեզի քաջալերած պիտի ըլլա:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱՅ

**Ամենապատիվ Սրբազն Պապրիաբը, հոգնոր հայրեն, սիրելի երուսաղեմցիներ և սիրելի ուխտավորներ,**

Մեր հոգին ուրախությամբ է համակված, որովհետև Մենք արժանացել ենք Ասպոծ ողորմության ու շնորհին վերաբին լինելու Երուսաղեմում քրիստոնյա ազգությունների համար սուրբ ու և վիճական այս քաղաքում: Երկու օր, ահա, քայլեցինք պատմության հետքերով, մեր ժողովրդի քրիստոնեական պատմության հանապարհներով: Քայլեցինք մեր Տիրոջ քայլած ճանապարհներով, և մեր հայացքի առջև վեր հասնեցին դրվագները Փրկչի կյանքի: Եվ անդրադառնոր, թե ինչ է երակադարձություն է ունեցել քրիստոնեությունը մեր ժողովրդի կյանքում անցյալում, այսօր և վարչակարգ՝ գալիք ժամանակներում: Մենք տեսանք մեր հայրենի անձնագործությունը, հզոր հավատքի վկայությունները, և Մեր հոգին լցվեց ցնծությամբ, լցվեց հպատակությամբ: Բայց նաև մարահոգությամբ անդրադառնոր, որ այս նվիրական ժառանգությունը մեզ փոխանցված, այսօր պահպանում են ընդամենը մի բոլոր հայորդիք: Մի բոլոր հոգնորականներ ու աշխարհականներ պահպանում են այս ամենը նվիրյալ հանձնառությամբ: Մեր գնահատականքները ենք բերում Երուսաղեմի հայոց միաբանությանը՝ ի գուխ Ամենապատիվ Սրբազն Պապրիաբը, նաև Երուսաղեմի մեջ ապրող Մեր գալակեներին, ձեզ,

սիրելի հայորդիներ, որ համախունք եք Պատրիարքարանի շորջ և այսօր Պատրիարքի և Մեր կանչին արձագանքեւ եք այսպէս միասիրոց, եկեղեց եք հանդիպելու հայրենաբնակ ձեր եղբայրների ու քոյրերի հետ, ոգևորվելու, գործապնդվելու նյասնով, եկեղեց եք ձեր հայրենակարությունը հագեցնելու:

Գիտեմ, որ ձեր հայացքը դեպի Տայրենիք է ուղղված, ապրում եք Տայրենիքով: Ձոդ Աստված օրինի ձեզ, թող Աստված զորացնի այդ ոգին ձեր մեջ: Մենք եկեղեց այսպէս սիրելիներ, որպէս Տայոց Տայրապետ, ևսև զորեապնդելու ձեզ դժվարին ձեր հանձնառությունների մեջ: Տուահստությունը հեռու է քրիստոնյացից: Մեր հայրերը հույսն են դարձրել լյանքից և հավատքն են ունեցել զինակից և կերպել են այս պանչևիքները, որ հպարտությունն են ամեն հայորդու: Մենք պարզու ունենք պահելու այս սրբությունները, ազգովի պահելու: Եկեղեց ենք հայապիհացնելու, որ դուք միայնակ չեք լինելու այս նվիրական զործում: Առաջն վկայությունը այս պարանիներն են, որ եկեղեց են Տայրենիքց՝ պատրի ուսանելու ու կրթվելու, դաստիարակվելու, այսպէս՝ Տիրոց Սուրբ Մեղանի առօս ծունը դնելու և իրենց ծառայությունը բերելու Երուսաղեմի Պատրիարքական Աթոռին:

Երուսաղեմի Աթոռոր առանձնահապուկ դեր և եշանակություն ունի ազգային մեր լյանքում: Ենք իրքն քրիստոնեական հավատքի օրուան, և իրքն հայ ազգի ճանաչման այցելարդ: Որքան որ հայ ժողովուրդը ճանաչվում է Տայապահով, թերևս նոյնաբան առկա է հնարավորությունը Տայապահանն ու հայ աշխարհը ճանաչելի դարձնելու Երուսաղեմով: Վյունու ոխափի են զալիս երեք մեծ կրոնների հետառորդները, բազմաթիվ այցելուներ և տիկանում են Տայոց Եկեղեցու ներկայությունը, լուս հայ ժողովորի մասին:

Տողիս լեցուն է հոգինուքով և առար ու ջերմ զգացումներով: Միրելի Սրբազն Պատրիարք, Մենք շնորհակալ ենք: Որ դժվարին պայմաններում կարելին և անկարելին եք իրազործում միարանության ու աշխարհական հայորդյաց հետ, որպէսզի պայծառ լինի Երուսաղեմի հայոց վանքը, շնչ լինի հայոց Պատրիարքական Աթոռոր: Այս օրերին ուրախության հետ ապրեցինք առանձնակի գոհունեակություն, քանզի մեր առջև պարկերվեց վաղվա հուսափ օրը, վաղվա երաշխավորված օրը Երուսաղեմի հայոց Պատրիարքության՝ ի զենք Ժառանգավորաց վարժարանի ուսանողների: Մեր գևահարակը՝ Մեղրակ Երկանյանին, ով Երևանից եկեղեց է այսպէս և իր օգործակար ծառայությունն է բերում Երուսաղեմի հայոց Պատրիարքությանը: Ձոդ Աստված օրինի ձեզ բոլորից:

Մայր Տայրենիք պիտի վերադառնաք հոյսերով: Տավաստիացնում են, որ ինչպիս դուք եք դեսպանները Տայրենիքի, այնպէս էլ ոխափոր հայորդիները պիտի լինեն դեսպանները Երուսաղեմի՝ Տայրենիքում և ի ախյուս աշխարհի: Մեր միասնությանը, մեր ջանքերի համարենուով պիտի կարողանանք նոր լուսավոր ժամանակները կերպել մեր ազգի և մեր Տայրենիքի:

Վյու առիթով շնորհավորում ենք Տայապահանի Տանրապետության բաղաքացիության անձնագրեր սպացած հայորդիներին: Վարահ ենք, որ կհամարվի նրանց

շարքը, յոթը կդառնա յոթանատուն, յոթանատունը՝ յոթ հարյուր, յոթ հազար, յոթանատուն հազար, յոթ միլիոն և այսպես ավելի:

Ապրեք միշտ Երուսաղեմի օրինության ներքո, միշտ Հայրենիքի սիրո մեջ և մեր Եկեղեցու մշտական աղոթքներով: Եկ շնորհն ու ողորմությունը Աստուծուն միշտ կլինի մեզ հետ:

Ոխտագնացության վերջին օրը սկսվեց Հայրավելական Պատրարագով: Սրբոց Հակոբյանց վանքի Մայր Տաճարում Պատրարազ մաքուցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հայրավելիք ամեն մի այցելություն ազգային-հոգևոր վերանորոգության մի նոր աղբյուր է դաշնում դրվագ Երկրի հայության համար: Այս ոխտագնացությունը վերանորոգության նման մի նոր աղբյուր եղավ Երուսաղեմի հայության համար:

## ՎԵՆԱՓԱՍԻ ԽՈՍՔԸ ՄՐԲՈՅ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՏԱԾԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՑՎԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

«Տէր, կեցո՞ Դո՞ զիայս  
Եւ արտ զնոսս պայծատ»:

Մ. Թաղիառյան

*Միրելի՛ Ամենապատիկ Պատրիարք եղբայր,*

*Միրելի՛ Գերաշնորհ, Ծոգենորհ և Արժանապատիկ հոգնոր հայրեր և  
Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,*

Փառք և զոհություն ենք մակուցում Աստծուն, որ պարզեց Մեզ ուրախությունը հայրենապատիկ մեր ժողովուրդի զավակաց հետ ուխտավորաբար այցի գալու Սուրբ Երուսաղեմ և այսօր վերաբին այս սրբազն Տաճարից Երուսաղեմի Սրբազն Պատրիարքի, ոխտապահ միաբանության և հայտափացյալ Մեր զավակների հետ աղոթք բարձրացնելու երկինք՝ հայցելով. «Տէր, կեցո՞ Դո՞ զիայս»: Կեցո՞ Դո՞ զիայս, Տէ՛ր, որ եղավ Քեզ սեփական ժողովուրդ: Դարեւ-դարեւ ապրեց ու սպիտեց կյանքի ճանապարհ դարձրած Ավելարանիդ լուսը: Քեզ հոսացյալ՝ ովագուր սրբով լրամարենք կերպեց այս սրբազն հողում: Աղոթեց Քեզ հայրենի հողի ամեն բարձունքում, ամեն ձորում ու դաշտավայրում իր համարի շաղախուր կառուցած վանքերում ու եկեղեցիներում: Տանուն Քեզ, Տէ՛ր, ճառագեց ու պայծառ լիսյեց հայ հոգու ու մերքի հանձարդ, ապրուն ու սերը: Տանուն Քեզ, Տէ՛ր, ծնունդ առան մեր հաղթանակները: Կառուցինք, երբ մեր կառուցածք ավելիցին, ապրեցինք, երբ ուղեցին կորսարյան մարտնկ մեզ:

Կեցո՞ Դո՞ զիայս, Տէ՛ր, ինչպես որ պահպանել ես՝ առաջաներիդ բարողությանը և առաքելապատիկ բազմելուախտ վկայիդ Սուրբ Աջի մկրտությանը արժանացնելով ասպաֆածային ողորմությանդ ու շնորհիդ: Պահպանել ես՝ առաջնորդելով մեզ հարության ու փրկության հույսովդ: Դուրս ես քերել մեզ մահվան խոր-

խորագիրներից, փրկել հողմներից ու փոթորիկներից: Նշար-նշար հավաքված Տե՛ր, շարունակում ենք մենալ Քեզ հավաքադրիմ ու սևիսկան ժողովուրդ:

Նոր հոգսեռով է լցուն այսօր ազգային-եկեղեցական մեր կյանքը: Մեր ազար Տայրենիքի վերաշինության շեն, բարգավաճ և հզոր ապագայի հոյսերով, Արցախի արդար դատի հաղթանակի, Տայոց ցեղասպանության համբնդիանոր ճանաչման հոգսերով: Տոյսերով ու ձգումներով մեր Տայրենիքի ու համայն Սփյուռքի միացյալ ներշաղախ ու զորեղ կյանքի: Ապավինած Աստծուն մեր հայրերի, հավատը մեզ առաջնորդություն ու զորություն դարձրած՝ աիդի մարմնավորենք մեր բոլոր լուսաշող երազներն ու հոգսերը: Տավարով պիտի ծաղկեցնենք ու արդյունավորենք մեր նախնիների ժառանգությունը մեզ ավանդված, որ բազմապատիկ է կերպված հավատով, շնորհատակ ու ծաղկյալ է ու հավերժական՝ հավագույն: Այսօր այսրեղ ենք՝ հայ հոգնորականներ, Տայարանի և Արցախի պետական ավագանու, զիրության և կրթության, մրավորականության ներկայացուցիչներ: Ուխտով եկել ենք Տերունակուի սուրբ հոյին խոնարիկներ և մեր հայաց նորոգելու, որպեսզի դառնա մեզ զորություն ու քաջակերություն, լոյս դա մեր կյանքին ու սեր, պրուղներ դա բազմապատիկ հայրենաշինության, եկեղեցակրության՝ ի փառ Աստծո, ի պայծառություն և ի շինություն Տայարանեյաց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ու Տայրենիքի:

Մեր ժողովրդի հավարանության վկայությունն են նաև Երուսաղեմում հայոց սրբադաշտիները, որոնց պահպանությունն ու պայծառությունը նախանձախնդրութեակու շարունակում է Մրբոց Տակորյանց ովարապահ միարանությունը՝ Ձեր հոգածու ու խնամակալ Ազի առաջնորդությամբ, սիրելի՝ Պատրիարք: Մեր հանդիպման այս երջանիկ առիթով ամենաբարձր Մեր գնահատամբն ու օրինությունն ենք բերում Ձեզ և Մրբոց Տակորյանց ովարյալ միարանությամբ: Եվ քող Աստված պահպանի Ձեզ քաջառողջ, քաջակորով ու ամուր՝ դիմագրավելու համար ներկա դժվարությունները և հասրատուն ու շեն, հավատի լոյսով պայծառ պահպանելու Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը:

Տայցենք միասնաբար, «Տե՛ր, կեցն Դու զիայս և արս զնոսա պայծառ»: Թող այսօր մեր հայրենի այս աղոթքը նվիրական այսպեսից լսելի լինի Քեզ, Տե՛ր մեր և Փրկիչ մեր: Ընդունի՛ մեր ովարյալ նորոց և զորացրու մեզ բոլորին մեր կոչման ու պարուրի մեջ և արժանի՛ արտ մեր սուրբ հայրերի հետ լիտուավորելու Քեզ ընդ Տորդ և ընդ Սուրբ Հոգվոյդ: Ամեն:

Այս ովիսպանացության վերջին կերպն ու բարձրակերը դարձավ Սուրբ Հարության փանարը: Խնչակն որ Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան փաճարն է հիմնված Ծննդյան այրի վրա, այնպիսի է Ս. Հարության փաճարը՝ թափուր գերեզմանի:

Ծննդյան փոքր և անշոր այրի ու թափուր գերեզմանի վրա կառուցված և ծավալաբարածական նման չափեր ընդունած զոյց փաճարներն ասես խորհրդանշում են երաշակառ Ծննդյան ու Հարության խորհրդիների ծավալումն աշխարհում: Երկու փաճարներն էլ զըրնը վում են հայերի, հույների և լատինների՝ կաթոլիկների իրավասության ներքո:

Անհավատ Հայրապետի զիսավորությամբ ուսկավորների մեր խումբը հանդիսավոր թափորով ներս մտավ Ս. Նարության դաճար: Հայոց Հայրապետը իր խոնարհումը թերեց Պատրանագեղին, որ խաչից իջեցվելուց հետո դրվել է Տիրոջ մարմինը՝ պարանքով պատելու համար, այսուհետև Եկեղեցական արարողությունների կարարմամբ ներսի մագու-ռում իր խոնարհումը թերեց Փրկչի հրաշափառ հարության նշանակ թափուր գերեզմանին:

Ուխտավորական ընդունված ավանդույթով Ս. Ծննդյան և Ս. Նարության դաճարներում ուխտավորները Սուրբ Երկրում զնված մոմերը վառում են մի պահ, ապա հանցցնում զանգակի ձև ունեցող կախված մերժայա անոթների մեջ, որ կրակը հանցում է անօ մի-ջավայրում, ապա այդ մոմերը, որպես այդ դաճարներում վառված մոմեր, դառնում իրենց հետ: Օրինության յուրօրինակ արդահայրություն է համարվում նաև թե՛ մոմերը և թե՛ ընդ-հանրապես Սուրբ Երկրից զնված հուշանվերները Ս. Ծննդյան այրի և Ս. Նարության զե-րեզմանի վրա զնելը:

Ընդունված ավանդույթ է մոմ վասել նաև նրանց փոխարեն, ովքեր ցանկանում են, բայց հնարավորություն չունեն այդ սրբավայրը զնալու: Նրանք խորիրդանշական մի գումար են դայիս, որով և ուխտավորը զնում և վառում է մի զույգ մոմ: Մեր խմբում ևս շարերը մոմ զառնցին իրենց նման իննդրանքով Հայասպանում դիմածների համար:

Ս. Նարության դաճարի հսկա զմբերի ներքո գգնվող մագուսի փոքր և նեղ դռնից ներս մինելով նախ դիմանում ես սյունածն այն քարը, որը պարկերվում է նաև Նարության ման-րանկարներում վրան նարած հրեշտակով: Վյն անվանվում է Հրեշտակի վեմ, և ասվում է, որ այս քարի վրա էր սպիրակազենսդ այն հրեշտակը, որը յունաբեր կանանց դվեց Հա-րության ավելիքը: Քիչ ստացանալով և մագուսի խորը իշնելով՝ վիմափոր ժայռում երևում է իր հոգևոր խորիրդով այնքան լեցուն թափուր գերեզմանը:

Ուխտավորներն այսուհետև եղան Տերունական, Զարչարանաց ճանապարհի, Խաչելու-թյան և Ս. Նարության հիշարակները իրենցում կրող մի շարք մագուսներում և Եկեղեցինե-րում, որոնք մասն են կազմում Ս. Նարության հսկայական դաճարի:

Թե՛ այսքեղ և թե՛ ընդհանրապես ողջ ուխտագնացության ընթացքում ուխտավորներին ուղեկցում և նրանց այցելած վայրերի մասին անհրաժեշտ բացաբարություններ և լուսարա-նություններ էին դրախ Տ. Արքունիկոպոս Շիրվանյանը, Տ. Գուսան վարդապետ Ալշան-յանը, Տ. Թեղողորս վարդապետ Զաքարյանը, Տ. Ալոնդ արքունական կարգական պատրիարք:

Երրուստելեմում առանձնակի հարզանքով են հիշում Կյուրեղ արքեպիսկոպոս Գարիկյա-նին, ով ավելի քան կես դար իր կյանքը նվիրեց Ս. Նարություն դաճարի հայկական քածնի ոչ միայն պահպանությանն ու նորոգությանը, այլև ուսումնասիրմանը: Ծնորիկ Կյուրեղ Սրբազնի ջանքերի, դաճարի հայկական մասի հիմքերի ներքո բացվեցին Ս. Նարության դաճարի առավել վաղ շերտի մի քանի հարվածներ և վաղ քրիստոնեական կարակոմքի մասեր, որոնք ունեն համարիչսպոնեական կարևորություն ու արժեն:

Ինչպես այսքեղ են ասում, Կյուրեղ Սրբազնը այս մեծ սենյակները պեղել ու բացել է՝ դարիներ շարունակ օրական մի քանի քահ հող հանելով, ապա և ներկայացրել բացված սենյակները: Նրա շնորիկ անգամ ազգային որոշակի դրոշմ է հաղորդվել համարիչսպո-նեական զիսավոր այս սրբավայրի հայկական մասին:

Օրինակ, անտվոր և հուզիք է, որ դամարի ներսում Սուրբ Վարդան անվամբ՝ Պապա-ը սեղան է կանգնեցված և կամ դամարի ներսի կենքրոնական հարվածներից մեկում պազմ ի վեր մի խճանկար պատրիկ կա՝ արված հայկական մանրանկարչության հեգունդությամբ, և պատրիկ ջորս կողմը շրջանակվում է հայերեն արձանագրությամբ, և թվարկվում են այսպես կապարված հայկական նորոգությունները:

Ս. Դարություն դամարում շարունակաբար Ս. Պապարազ են մարդուցում և եկեղեցական դարբեր արարողություններ կապարում հայերը, հոյները և կաթողիկները: Որևէ մի թերացում խև կարող է սահմանափակել եղած իրավունքները: Նոյնը վերաբերում է և Սուրբ Երկրի մի շարք այլ սրբավայրերի: Եվ միայն այսպես ես իրավես հասկանում, որ «Երուսաղեմի հայոց գինվորյալ միաբանություն» արդահայպությունը ոչ գեղեցիկ մի խոսք է և ոչ է ասվում է հեռոց եկող ավանդություն: Այն կենդանիորեն շարունակվող մի ներկա է՝ ամեն օր կապարվող եկեղեցական արարողություններով և Ս. Երուսաղեմի ու Սուրբ Երկրի հայկական իրավունքների համար մղվող պայքարով ու պահպանությամբ:

Եռոյյա այս ուխտազնացությունն ավարտվեց Ժառանգավորաց վարժարանում երեկոյան կազմակերպված ողջերթի ընթրիբով, որի ընթացքում խոսք ասացին գրող Կարպիս Սուրենյանցը, Մարտենայարանի վնօրեն Սեն Արքշարյանը և Բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Նակորյանը:

Ուխտավորներին ողջերթի խոսքով դիմեց Թորգում Պատրիարքը:


## Տ. Թ-ՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ ՈՂՋԵՐԹԻ ԸՆԹ-ՐԻ-ՔԻՆ

Պապվական Հայրենիքի պարվական ներկայացուցիչները ուխտավորներ իբրև եկած են և այդ ուխտավորությունը երկու երեք օրվան մեջ անբավարար է և վստահ ենք, որ ձեզմեն ամեն մեկը պիտի հետո մրածե, որ երանի ավելի երկար մնայինք, դեռ ավելին կար, որ պետք է տեսնեինք, պետք է զգայինք, պետք է ապերեինք:


Ուխտավորը մի դիմում է և մեր հայկական խոսքն է, որ մեկ անգամ Երուսաղեմ եկողը յոթ անգամ պետք է զա և պիտի զա: Յոթ անգամ եկողը այլևս հյուր ուխտավոր չէ: և արդեն ինքը պետք է լինի այս անգամ հյուր ուխտավորներ իր հետ քերող:


Եվ այս հոգիով ու մրածումներով կրծեմ բարի եր եկել իբրև ուխտավոր, յոթ անգամ մի մոռանար և հիշենք, որ դուք իբրև այս ուխտի զավակները պիտի զաք և ձեզի հետ նոր ուխտավորներու շարանը անդադար և անպակաս պիտի անեք: Այս զգացումներով ընդունեք այս փոքրիկ նվերները, որ դրվեցան ձեզ, որ հուշանվեր մըն է մեր Երուսաղեմի արվեստագետ երիտասարդներու իբրև աշխարհանք:

Ուխտավորների՝ երեք օրերի ընթացքում ապրած զգացումներն ու ապրումները ընդհանրացված ձևով արդահայքելով, այնուհետև իրամեջդի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:



ՎԵՐԱՓԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՓՈՐԸ  
ՀԱՅ ՍԿԱՌՏՆԵՐԻ ԱՌԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՆՈՒՄ Է  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Ս. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԱճար





ԿԵՐԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԾ ՕՐՎՆԵԼՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ԲՈՂՈՎՐԴԻՒՆ  
ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ Ս. ԴԱՐՈՒԹՅԱՆ ՏԱճար

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՈՂՋԵՐԹԻ ԸՆԹԱՐԻՔԻՆ

Միրելի՛ Սրբազն Պատրիարք, սիրելի հայորդիներ, պահը մուրնենում է հրամակութիւնի, բայց Մենք հրամակութիւնը չենք տալիս Երուսաղեմին, որովհետև Երուսաղեմը մեզ հետ է միշտ: Սակայն հրամակութիւնը մեր սիրելիներին: Նրանք Երուսաղեմի Մեր բարեկապաշտ հավատացյալ զավակներն են, Երուսաղեմի հայոց Պատրիառոպության ոխորակ միարանությունն է իր առաջնորդով՝ Տ. Թորգոն արքափակուստ Մանուկյան Պատրիառորդով: Դրամեջից առաջ շնորհակալության ու բարեկապահանքի խոսք է ասվում: Ուստիսպորեներին պիտի մաղթեն, որ Աստված իրենց ոխորակ ի կատար ածի: Վարահ ենք, որ յուրաքանչյուրդ այսուել, այս և լիւրիական սրբությունների առջև իր հոգում ծրարած մի բարի իդա աղոթքով երկինք վերաստաբեց՝ հոսանքով, որ Աստված ունկնդիր կիմնի իր խնդրանքին: Գիշենք և քննորոգում ենք, որ Մեր հայցը Աստված կողմից միշտ լսելի է, բայց Աստված է տիօքիւում ժամանակը, թե այն եղք պիտի ի կատար ածի՞:

Միրելիներ, ոխորակորը ուղեոր է, ճամփորդ էիք արդեն, երբ մկրտվեցիք Քրիստոսի անունով, դարձաք Քրիստոսի ոխորակոր ձեր մկրտությանք: Այսուել՝ Երուսաղեմում վերանորոգեցիք ձեր ոխորակ իրեն Քրիստոսի ոխորակորներ, և Մենք վարահ ենք, որ որպես այդպիսիք դուք պիտի կարողանաք պահապանները ու քարոզիչները լինել քրիստոնեական հավատքի, որպեսզի հավերժ լինի հայ ոխորակորի ճամփորդությունը դեսպի Քրիստոս, դեսպի և լիւրիական այս սրբավայր Երուսաղեմ, որպեսզի միշտ Հայաստանը մեր ապրի որպես Քրիստոնյա Հայաստան: Մեր ժողովրդի հարաբենությունը, մեր ժողովրդի հավերժությունը պայմանավորված է այդ խորհրդով: Պատությունը մեզ վկա. երբ հետացել ենք մեր հավատքից, երբ հետացել ենք Աստծոց՝ հետացել ենք ազգությունից: Դրամեջի տալով Մեր սիրելի Սրբազն Պատրիառքին, ոխորակ միաբանությանն ու Երուսաղեմի հավատավոր ժողովրդին, պիտի մաղթենք. որ մնան զորել իրենց հավատքի մեջ, որ երբեք չըկարանան, որքան էլ իրենց ծառայության ճանապարհը դժվարին լինի: Թող գիտնան, որ Հայաստանը, Քրիստոնյա Հայաստանը իր զավակներով իրենց կողմին է, իրենց աջակից է, իրենց նեցուկ է և միշտ անհրաժեշտության դեսպրում պիտի զա լծակից լինելու, մարդուակից լինելու Երուսաղեմի մեր և լիւրիական հոգեոր զինվորյա դասին:

Միրելի Սրբազն Պատրիառք, Մեր խորը զոհումակությունը և շնորհակալությունն ենք հայունում Ձեզ այս օրերին ոխորակոր հայորդիներին նկատմամբ դրսեռուած սիրո համար, ոչաղբության համար, բարի, հոգածու վերաբերմունքի համար: Այս առիթով ուզում ենք Մեր զնահաւանքը փոխանցել նոյնական միաբանության անդամներին, ովքեր պատրաստական ծառայություն մարտցեցին ոխորակորներին և Մեզ: Այս պահին կուզեն նաև շնորհակալության խոսք ուղղել բոլոր այն անձանց, ովքեր ոխորազեացության իրականացման գործում իրենց նպատակը, իրենց ծառայությունը բերեցին: Ի մասնավորի՝ Ռուսաստանի հայոց

թեսի հայորդյաց: Թող Մեր աղոթքը, Մեր մաղթանքը միշտ ուղղված լինի ձեզ, սիրելիներ, որ անձանձությունը, անդրդունք կերպով հաջողության առաջնորդեցիք այս նևիրանման գործը:

Մենք հայց ենք առ Աստված բարձրացնում մեր Եկեղեցու, մեր Տայրենիքի ու մեր ժողովրդի զավակաց համար, որ Տերը պահի Եր բարի հայացքի ներքո խաղաղության և առաջընթացի մեջ: Աստված օրինությունն ենք հացում, Աստված սերն ու զորակցությունը ոխտավոր ճամփորդերիս: Տերը օգնական մեզ ամենքիս:

Վերջում դեղի ունեցավ նվերների փոխանակում: Թորգոմ Պապրիարքը նվիրեց Վեհապատճենի՝ հախճապակյա սալիկների վրա պարկերված նկարը, իսկ Նորին Սրբությունը Ամենապատիկ Պապրիարքին նվիրեց Ս. Էջմիածնում մերօրյա վարպետների կողմից պապրատված զեղակյուս մի փոքրիկ սեղանի խաչքար, իսկ Ժառանգավորաց վարժարանի՝ հայաստանյան ճանաչված նկարիչներից Վալմարի կրավներից:

Վեհափառ Տայրապետի զիսավորությամբ ոիստավորների խումբն այնուեւս ուղևորվեց Թել-Ավիվի օդանավակայան, որտեղից Տայաստան հասավ մայիսի 15-ի վաղ առավորյան:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ